և զսովորութիւնս իւրեանց, նոյն օրինօք վարեսցին դարձեալ այժմ և առ յապայն, և մի յարուսցեն վէճս և խռովութիւնս՝ և կառուսցին ընդ միմեանս։

Ահա այսպէս ծանր և դժուարակիր նեղութեամբ եւ աչխատութեամբ՝ վախճան եղեւ այս ահագին յուզմանց և խռովութեանց, թող զվճռագումար ծախս երկուց կողմանց, որք դրեթէ յումպէտս վատնեցան։ Եւ հուսկ ուբեմն հաչտեցան Պատրիարքունք եւ գլխաւորք երկուց ազգաց միջնորդութեամբ Դեսպանին Գաղղիոյ, և ըստ առաջարկելոյ Գրիգորի և Յովհաննու Պատրիարքաց՝ գրեցան անդ 'ի Դեսպանատան փոխադարձ դաշնագրութիւն ինչ 'ի բարբառ Իտալացւոց ստորագրութեամբ և կնքով Պատրիարքաց և գլխաւորաց երկուց ազգաց։ Դաշնագրութեան բուն իսկ օրինակն՝ պահեալ էր 'ի Ս. Աթոռս մինչեւ ցաւուրս մեր, զորոյ զիմաստս թարգմանութեան դնեմք աստ 'ի ստորեւ, որ ունէր օրինակ զայս։

Շնորհիւ Տեառն մեք Պատրիարք Երուսաղէմի և Գահակալ Աթոռոյ նորին, յայտ առնեմք այսու գրութեամբ, տարաձայնութիւնն որ յամաց հետէ տեղի եգիտ 'ի մէջ Հայոց եւ Ցունաց, յազագս եկեղեցական սովորութեանց և արարողութեանց, մնանելոյ 'ի Ս. Գերեզմանն Քրիստոսի, հետեւեալ երից ազգաց և սեփհական տեղեաց իւրաքանչիւր քրիստոնէից։ Ի վերջոյ զմոռաւ ածեալ զանպատեհ խռովութիւնս և հետեւապէս զվնաս նորին՝ որք պատահին 'ի վիճմանց և 'ի հակառակութեանց, և փափագելով մեր միաբան սիրոյ և խաղաղութեան՝ հաճութեամբ հաճաձայնիմք ընդ վարդապետս Հայոց կոստանդինուպոլսի և Երուսաղէմ՝ և ընդ համայն ազգս նոցա, բառնալ 'ի միջոյ զդժուարութիւնս անհամաձայնութեանց վիճմանց և վրդովմանց, , յորոց ծնանին խոչք բարեկամութեան եւ խաղաղութեան, ուստի յայտ առնեմք 'ի դրի աստ զյառաջադրութիւն մոռաց մերոց։

1°. յԵկեղեցական արարողութիւնս՝ 'ի սկզբանէ և այսր ըստ սովորութեան՝ Ցոյնք ունին զառաջնութիւնն՝ և պահեսցի նոցա այն, մանաւանդ յարարողութեան Ս. Շաբաթուն 'ի միասին մտանել 'ի Ս. Գերեզմանն երկուց Պատրիարքաց՝ Ցունաց և Հայոց, և կամ Փոխանորդաց նոցին,